



ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0064-22

Ձեռնարկողը՝

«Էդմ Սոլար» ՍՊԸ

Վայոց ձորի մարզ, ք. Վայք երկրաբանների փ., տ. 7

Գործունեությունը՝ Վայք համայնքի Ազատել գյուղի տարածքում
նախատեսվող արևային ֆոտովոլտային
էլեկտրակայանի շրջակա միջավայրի վրա
ազդեցության գնահատման հաշվետվություն
Վայոց ձորի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող՝



Խ. Մարտիրոսյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0064 - 22

26 > 05 2022թ.

Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Ազատեկ գյուղի տարածքում նախատեսվող արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝

«Էդմ Սոլար» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն
/Բ կատեգորիա/

Գտնվելու վայրը՝

Վայոց ձորի մարզ, Ազատեկ բնակավայր

Ներածական մաս. Վայոց Ձոր մարզի Վայք համայնքի, Ազատեկ գյուղի 33-րդ փողոցի 1/2 հողամասում նախատեսվում է կառուցել 5ՄՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային (ՖՎ) էլեկտրակայան: Կայանից ստացված էլեկտրաէներգիան նախատեսվում է վաճառել Հայաստանի էլեկտրական ցանցեր ՓԲԸ-ին համաձայն հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (ՀԾԿ) որոշման:

Նախագիծը կատարված է ըստ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրված լիցենզիայի ԼԷ N0662:

Գործունեության նպատակն է կառուցել ժամակակից հագեցվածությամբ արևային կայան: Նախատեսվող գործունեության տարածքի նպատակային նշանակությունը՝ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների գործառնական նշանակությունը՝ էներգետիկայի:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 5-րդ մասի, գ. ենթակետի՝ դասակարգվում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. «Էդմ Սոլար» ՍՊԸ-ն նախատեսում է Վայոց ձորի մարզի Ազատեկ համայնքում իրականացնել արևային կայանի նախագծման, կառուցման և շահագործման աշխատանքներ:

Ըստ տեխնիկական պայմանների արևային կայանը 5000 կՎտ դրվածքային հզորությամբ, միացվում է «Ջերմուկ» 110կՎ օդային գծի մոտակա խարսխային հենարանին, կառուցելով մոտ 9.5կմ 110կՎ օդային գծեր:



Արևային կայանի համար ընտրվում են 10/0,4 կՎ լարման տրանսֆորմատորային ենթակայան: Կառուցվում է 110/10 կՎ լարման 6300 կՎԱ ենթակայան: Կառուցվող 110/10 կՎ ենթակայանը 110կՎ լարման գծով միացվում են «Ջերմուկ»-110 գծի մոտակա N5 հենարանին:
-Արևային կայանների ակտիվ հզորությունը.-5000 կՎտ

-Կայանների հզորության գործակիցը - $\cos\varphi = 0.95$

-Արևային կայանների լրիվ հզորությունը - 5263 կՎԱ

Սույն աշխատանքային նախագիծը կազմված է ճարտարապետաշինարական լուծումների և պատվիրատուի կողմից տրված տեխնիկական բնութագրերի հիման վրա: Այն ներառում է Վայոց ձորի մարզի, Վայք համայնքի Ազատեկ գյուղի 33-րդ փողոցի 1/2 հողամասում կառուցվող 5ՄՎտ դրվածքային հզորությամբ ֆոտովոլտային էլեկտրակայանի նախագծը, որի կադաստրային ծածկագիրն է 10-005-0112-0102:

Նախագծով նախատեսվում է իրականացնել տեղանքի համահարթեցման աշխատանքները բուլդոզերով և JCB տիպի շինարարական տեխնիկայով: Գոյություն ունեցող տարածքում առկա են տարբեր բարձրությամբ թմբեր և քարեր, որոնք ենթակա են հարթեցման և հավաքման: Տեղանքում բացակայում է հողաբուսական ծածկույթը, տեղանքը հիմնականում անապատային է: 5 ՄՎտ հզորության ֆոտովոլտային կայանը նախատեսվում է կառուցել 4.5հա տարածքի վրա: Հողային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվում են գոյություն ունեցող նիշերը և տեղանքի ռելիեֆը: Հիմնականում նախատեսվում է մաքրում և արտահանում գոյություն ունեցող փշատիպի բուսականությունից:

Արևային էլեկտրակայանի տեղադրման համար նախատեսվում է կառուցել մետաղական կոնստրուկցիաներով հարթակներ 60x40x2.5մմ, 60x40x2մմ, 60x30x2.5մմ, 40x40x2.5մմ, 30x30x2.5մմ, ուղղանկյուն խողովակներով, որոնք ամրացվում են հողին բետոնե գլանաձև հիմքերով 250մմ տրամագծով և 1100մմ երկարությամբ՝ ամրանավորված A500c դասի 6մմ և 12մմ տրամագծով ամրաններով:

Փոխակերպիչները և ֆոտովոլտային վահանները տեղադրում են կոնստրուկցիայով հորիզոնի նկատմամբ 28° թեքվածությամբ, գետնից առնվազն 100սմ բարձրության վրա (ձնածածկույթի առավելագույն տասնօրյակին բարձրությունը ձմռան ընթացքում կազմում է 41սմ): Ֆոտովոլտային վահանակների կոնստրուկցիաները նախատեսված են մինչև 35մ/վ քամու արագության համար (տարածքում քամու առավելագույն արագությունը 24մ/վ):

-Արևային ֆոտովոլտային վահանակների քանակը 9360

-Օդային գծի հենասյուների քանակը 30

Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Ազատեկ գյուղի 33-րդ փողոցի 1/2 հողամասում կառուցվող 5ՄՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի տեղաբաշխման, կրող կոնստրուկցիաների և ֆոտովոլտային մոդուլների դասավորության, հաստատուն և փոփոխական հոսանքի էլեկտրական համակարգերի, մալուխային խրամուղիների, ենթակայանի, 0.8կՎ և 35կՎ բաշխիչ սարքավորումների, հաշվառման և մոնիթորինգի, անվտանգության և արտաքին լուսավորության համակարգերի, 0.4կՎ սեփական կարիքների, հողանցման համակարգի, 0.8կՎ մալուխների և կայանի տարածքում 35կՎ սարքավորումների մոնտաժման, տեղաբաշխման և ընդհանուր էլեկտրական ցանցին միացման սխեմաները:

Ֆոտովոլտային կայանի գեներատորային մասը նախատեսվում է կառուցել ֆոտովոլտային վահանակներով՝ յուրաքանչյուրը 535Վտ առավելագույն հզորությամբ, որոնք 20 հատ 250կՎտ



ելքային հզորությամբ փոխակերպիչների փոփոխական հոսանքի ելուստներից մալուխներով միանում են ենթակայանի 0.8կՎ լարման գլխավոր ընդունիչ վահաններին:

Փոխակերպիչները և ֆոտովոլտային վահանակները տեղադրվում են կոնստրուկցիայով հորիզոնի նկատմամբ 28° թեքվածությամբ, գետնից առնվազն 100սմ բարձրության վրա (ձնածածկույթի առավելագույն տասնօրյակային բարձրությունը ձմռան ընթացքում կազմում է 41սմ): Ֆոտովոլտային վահանակների կոնստրուկցիաները նախատեսված են մինչև 35մ/վ քամու արագության դեպքում:

250կՎտ հզորությամբ փոխակերպիչները ունեն 20-ական հաստատուն հոսանքի մուտք, որին միացվում են 20 հատ զուգահեռ շղթաներ (String)՝ 26 հատ հաջորդաբար միացված ֆոտովոլտային պանելներով: Ֆոտովոլտային պանելների շղթաները միմյանց միացվում են պանելների մուտքին 4մմ² (EU)/12AWG(US), L=1200մմ և PV1-F1x4մմ² մալուխներով: Մոդուլների և փոխակերպիչների համար նախատեսված են MC4 տիպի կոնեկտորներ:

Փոխակերպիչները SOLIS արտադրության, մոդելը SOLIS-250K-EHV-5G՝ 250կՎտ ելքային հզորության, ցանցային տեսակի, 14 MPPT (Maximal Power Point Tracker) 28 մուտքերով:

Փոխակերպիչն ունի համացանցին միանալու և տվյալները փոխանցելու հնարավորություն, նրանում ներկառուցված են DC և AC իմպուլսային գերլարումների պաշտպանիչ սարքեր (SPD):

Յուրաքանչյուր փոխակերպիչից դեպի ՏԵ-ի ցածր լարման վահաններ էլեկտրամատակարարումն իրականացվում է ստորգետնյա, զրահապատ, ալյումենե AB56WB տիպի $3 \times 95 \text{ մմ}^2$ հատույթով մալուխագծով: Լարման անկումը հաշվարկված է մինչև 4%: Մալուխները կարճ միացման և գերբեռնվածության հոսանքներից պաշտպանվում են մուտքային եռաֆազ CM3-225 տիպի ավտոմատ անջատիչներով: Բաց տարածքում տեղակայվող ավտոմատ անջատիչները IP 65 տիպի են:

Արևային ֆոտովոլտային կայանը 35կՎ ցանցին միանում է 6300կՎԱ/35/0,8կՎ տրանսֆորմատորի միջոցով, օգտագործվում է նաև 25կՎԱ/0.8/0,4կՎ լարման տրանսֆորմատոր՝ սեփական կարիքների համար:

Սույն նախագծում ներառված են լուսավորության հենարանների տեղաբաշխումը, սնող մալուխագծերի անցկացումը, լուսավորության ավտոմատ ղեկավարման արկղի մենտաժումը և սնուցումը 25կՎԱ/0.8/0,4կՎ ՏԵ-ի 0,4կՎ լարման վահանից:

Լուսավորության հաշվարկն իրականացվել է Dialux համակարգչային ծրագրով՝ 3d մոդելավորմամբ, համաձայն ՀՀՇՆ 22-03-2017 նորմերի: Հաշվարկի միջոցով ընտրվել է լուսավորության հենարանների բարձրությունը, միջինհենարանային հեռավորությունը, լուսարձակների հզորությունը և թեքման անկյունը:

Dialux ծրագրով հաշվարկում օգտագործվել է 30լմ/վտ արդյունավետությամբ լուսարձակ: Լուսավորության ցանցը կառուցվում է 4,5մ բարձրության մետաղական բարձակներով հենարաններով (բարձրությունը սահմանափակված է հաշվի առնելով ստվերների առկայությունը ֆոտովոլտային վահանակների վրա):

Լուսատուի տեխնիկական բնութագրերն են

- LED լուսատուներ՝ 30 Վտ հզորությամբ,
- Գունային ջերմաստիճան 4000Կ:
- Գունափոխանցման գործակից >80 (CRI)
- Հոսանքի լարման աշխատանքային տիրույթը՝ 220-240վ,



- Աշխատանքային ջերմաստիճան՝ $-40 - +50^{\circ}\text{C}$,
- Արտաքին մթնոլորտային ազդեցությունից պաշտպանվածություն՝ IP65,
- Մեխանիկական ազդեցությունից պաշտպանվածություն՝ IK06 [1]]
- Արդյունավետությունը >85 լմ/Վտ,
- Թողարկման հոսանքը՝ 1.11Ա,
- Հզորության գործակիցը՝ 0.9:
- Սնող մալուխները անցկացվում են ստորգետնյա եղանակով:

Լուսավորությունը կառավարվում է լուսավորության ղեկավարման արկղից (ԼՂԱ): ԼՂԱ-ն տեղադրվում է տ/ե-ի պատին: ԼՂԱ-ն ունի ավտոմատ և ձեռքի կառավարման ռեժիմներ: Ավտոմատ կառավարումն իրականացվում է ըստ բնական լուսավորվածության աստիճանից: Կայանի տարածքում աշխատանքներ իրականացնելու համար նախատեսված են էլ. 16Ա, 220Վ վարդակներ մետաղական արկղում:

Տեսահսկման համակարգն ապահովում է պահպանվող տարածքի շուրջօրյա տեսահսկում, ինֆորմացիայի գրանցում և արտացոլում պահակատան համակարգչի մոնիտորի էկրանին: Տարածքի տեսահսկման համակարգը բաղկացած է հասցեավոր տեսախցիկներից, ինֆորմացիոն ստորգետնյա մալուխներից, ցանցային կոմուտատորներից: Ինֆորմացիոն և տեսահսկման բոլոր մալուխներն անցկացվում են պոլիէթիլենային խողովակներով:

Ֆոտովոլտային կայանի հողանցումն իրականացվելու է համաձայն СНиП 3.05.06-96:

Հողի մակերևույթին 0.9մ խորության վրա հավաքվում է հողանցման սարքվածքը (կոնտուրը), որը բաղկացած է.

- հողանցման հորիզոնական հաղորդիչից (40x4 շերտապողպատ),
- հողանցման հաղորդաձող (50x50x5, L=2մ անկյունակ),
- հողանցման հաղորդալարերից:

Հողանցման դիմադրությունը տարվա ցանկացած եղանակի չպետք է գերազանցի 4 Օհմ: Լաբորատոր չափումներից հետո, եթե այն մեծ է նորմավորված դիմադրությունից անհրաժեշտ է խփել լրացուցիչ էլեկտրոդներ:

Պաշտպանական հողանցումն իրականացվում է հողանցման հաղորդալարերով: Այդ նպատակով ֆոտովոլտային պանելների այլումինե իրանը հողանցման հաղորդալարով միացվում է հողանցման համակարգին: Բոլոր մետաղական ոչ հոսանքատար սարքավորումները պետք է հողանցվեն:

Տարածքը պետք է ապահովել սպասարկման համար անհրաժեշտ արահետներով, ջրամատակարարման, գազամատակարարման և էլեկտրամատակարարման համակարգերով: Ենթակայանի տարածքում նախատեսվում է հակահրդեհային, ծխի և ջերմաստիճանի տվիչներ: Կայանի տարածքը ցանկապատված է 2մ բարձրությամբ մետաղացանցով: Տարածքի հիմնական մուտքը հյուսիսային կողմից է: Նախագծում կիրառված բոլոր նյութերը ենթակա են փոփոխության համաձայն տեխնիկական պահանջների, եթե անյ չի բերում համակարգի տեխնիկական տվյալների վատթարացման:

Ֆոտովոլտային կայանի կառուցման աշխատանքների ժամանակ նախատեսվող հիմնական աշխատանքները կազմված են հողի հարթեցման, տոփանման աշխատանքներից, որից հետո բետոնային ամրացումով կոնեղադրվի ֆոտովոլտային պանելի հիմքը և կոնեղադրվի պանելը:

Վայք համայնքի Ազատեք բնակավայրից մատակարարվելու է աշխատակիցների խմելու և կենցաղային պահանջների համար նախատեսված ջրաքանակը:



Ենթակայանի տարածքում նախատեսվում է հակահրդեհային, ծխի և ջերմաստիճանի տվիչներ: Տարածքն անբողջությամբ գտնվում է տեսահսկման գոտում: Ենթակայանի վրա նախատեսվում է տեղակայել մետեոկայան:

Նախատեսվող գործունեության համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներն և նյութերը տարածքում երկարաժամկետ կտրվածքով չեն պահպանվելու, այդ իսկ պատճառով պահման լրացուցիչ միջոցառումներ չեն նախատեսվում: Կայանի շահագործման ժամանակային երաշխիքը կազմում է 25 տարի, ենթակայանի համար՝ 30 տարի:

Շինարարական աշխատանքները իրականացվելու են ըստ օրացուցային պլանի: Աշխատանքների ընդհանուր տևողությունը կկազմի՝ 21 շաբաթ (147 օր), այդ թվում հողային աշխատանքների՝ 1 շաբաթ: Շինարարական աշխատանքները սկսելու համար նախատեսվում է իրականացնել հետևյալ նախապատրաստական աշխատանքները՝

- ժամանակավոր ցանկապատման իրականացում,
- պահեստային և մոնտաժային հարթակների կարգավորում,
- ժամանակավոր տնակների տեղադրում,
- ժամանակավոր ինժեներական ցանցերի տեղադրում,
- ջրի պահեստային բաքի տեղադրում,
- կեղտաջրերի հավաքման ժամանակավոր տարողության տեղադրում,
- մեքենաների և մեխանիզմների փոխադրում շինհրապարակ,
- բանվորների հրահանգավորում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ,
- անվտանգության նշանների տեղադրում,
- հակահրդեհային միջոցների տեղադրում:

Կոմունալ կենցաղային թափոնները կուտակվելու են ադմինիստրատիվ շենքին կից նախատեսված աղբամանում, որից հետո համայնքային կոմունալ ծառայությունը կիրականացնի թափոնի տարածքից հեռացում դեպի համայնքային աղբատեղի:

ՀՀ տարածքում վտանգավոր թափոնների պահման, պահեստավորման, տեղափոխման և վերամշակման գործունեությունը լիցենզավորվող գործունեություն է, ուստի ընկերությունը նախատեսում է մինչև թափոնների առաջանալը անձնագրավորել թափոնները, որից հետո կտրամադրվեն լիցենզավորվող կազմակերպությանը: Տարածքում վտանգավոր թափոնների ժամանակավոր պահման վայրում կհավաքվեն առաջացող թափոնները, որից հետո կտրամադրվեն լիցենզավորվող կազմակերպությանը: Առաջացող թափոնները միանվագ չեն առաջանալու, այլ խոտանվելու են ժամանակի ընթացքում, ուստի դրանց պահեստավորումը լինելու է փոքր ծավալներով: Խոտանվածները փոխարինվելու են նորերով, խոտանվածները տեղափոխվելու են լիցենզավորված կազմակերպության տարածք:

Շինարարության փուլում առաջանալու են թափոններ, որոնց հնարավոր ազդեցությունները հողային և ջրային ռեսուրսների վրա մեղմվելու նպատակով նախատեսվում է:

-վտանգավոր նյութերը և մետաղական թափոնները կհանձվեն համապատասխան լիցենզավորված կազմակերպություններին՝ դրանց հետագա վերամշակման և օգտագործման համար,

- շինարարական թափոնները կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված վայր, քանի որ տարածաշրջանում չկան կազմակերպված սանիտարական աղբավայրեր,



-շինարարության ժամանակ առաջացած վտանգավոր թափոնները կհանձնվեն վնասազերծում կատարող կազմակերպություններին:

Ֆոտովոլտային կայանի և հարակից տարածքներում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն հայտնաբերվել:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում.

- շինարարական սարքավորումներն ապամոնտաժվելու են,

- շինարարական հրապարակները մաքրվելու են, վերականգնվելու է լանդշաֆտը:

Ռեկուլտիվացիայի աշխատանքների ընթացքում հավաքված հողաբուսաշերտի փոում արևային կայանի տարածքով, որից հետո կիրականացվի սիզախոտի ցանում: Արդյունքում հնարավոր կլինի տարածքն օգտագործել որպես արոտավայր: Ռեկուլտիվացիայի ընդհանուր մակերես կազմում է 5հա: Ռեկուլտիվացիայի համար նախատեսվող գումար 4 500 000 ՀՀ դրամ:

ԸՆդամենը արևային էլեկտրակայանի շինարարության արտանետումների տնտեսական վնասը կկազմի՝ 30400 դրամ:

Ընդամենը բնապահպանական ծախսերը կկազմեն՝ 800.0 հազար դրամ, իսկ մշտադիտարկումների համար նախատեսվում է 500,0 հազար դրամ:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

-շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում կատարվելու է գրունտի խոնավեցում, անհրաժեշտության դեպքում՝ ճանապարհների ջրցան: Ջրցանը կատարվելու է ջրցան մեքենայով՝ չոր և շոգ եղանակներին,

-գործունեության վայր շինանյութերի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկ ունեցող մեքենաներով, կամ նյութերը տեղափոխող մեքենաները փակվելու են անջրթափանց թաղանթով,

- տարածքում նյութերը պահվելու են ծածկված վիճակում՝ անջրթափանց թաղանթով, կամ ժամանակավոր ծածկի տակ,

-շինարարական տեխնիկան և տրանսպորտային միջոցներն օգտագործվելու են միայն սարքին վիճակում, իրականացվելու են պարբերաբար ստուգումներ:

- շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում՝ մասնագիտացված մեքենաներով,

- շինարարության փուլում աշխատողները կօգտվեն հարակից տարածքում գործող արևային կայանի գոյություն ունեցող սեպտիկ հորից:

- ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների հայտնաբերման դեպքում՝ ընկերությունը նախօրոք առանձնացնելու է հատուկ պահպանման գոտի՝ վերջիններիս տեղափոխելու և վերատնկելու համար:

-շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպվելու է ցերեկային ժամերին,

-տրանսպորտային միջոցները և շինարարական տեխնիկան օգտագործվելու են սարքին վիճակում՝ աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով,

-պարբերաբար ստուգվելու և կարգաբերվելու են տեխնիկական միջոցները, տրանսպորտային միջոցների շարժիչները:



-նախատեսվող գործունեության վայրն ապահովելու է հակահրդեհային հիդրանտներով, կրակմարիչներով և շանթարգելներով,

-մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցվելու են,

- շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրվելու են հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ,

շահագործման փուլում հնարավոր է թափոնների առաջացում, որոնց ազդեցությունները նվազագույնի հասցնելու համար նախատեսվում է.

- Հալոգենները, դեֆիլինները և տերֆենիլներ չպարունակող բանեցված տրանսֆորմատորային յուղերը հավաքվելու են համապատասխան տարաների մեջ և հանձնվելու են մասնագիտացված վերամշակող կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով:

- Հնարավոր արտահոսքերի դեպքում կիրառվելու են spill kit կոչված ներծծիչ կտորները, որոնք հնարավորություն են տալիս արագ ներծծելու յուղային զանգվածը,

-Յուղոտված լաթերը խառնվելու են կենցաղային աղբի հետ 1/10 հարաբերությամբ և տեղափոխվելու են քաղաքային աղբավայր, կամ հանձնվելու են վերամշակող կազմակերպություններին:

-Ասֆալտբետոնե խառնուրդի մնացորդները հանձնվելու են ասֆալտապատող ընկերություններին:

-Յուղերով աղտոտված ավազը հանձնվելու է մասնագիտացված ընկերություններին՝ պայմանագրային հիմունքներով:

- Սև մետաղի ջարդոնը հանձնվելու է մասնագիտացված կազմակերպություններին:

Պատճառաբանական մաս. Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Ազատեկ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմիններն ու հասարակությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, կադաստրի կոմիտեն, ինչպես նաև Արագածոտնի մարզպետարանը: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

1. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել՝
 - ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամաններով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները,
 - շրջակա միջավայրի, ինչպես նաև մարդու առողջության, անվտանգության և տեխնիկական անվտանգության ՀՀ-ում գործող նորմերի պահանջները,



- ՇՄԱԳ հաշվետվությունում ամրագրված տեխնոլոգիական նախագծման նորմերի և բնապահպանական պահանջների կատարումն ու Ազատեկ համայնքում ընկերության կողմից նախատեսվող սոցիալական ծրագրերի իրականացումը,

- բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումն ու ժամանակացույցերը:

2. Շինարարության ընթացքում որպես պարտադիր պահանջներ, անհրաժեշտ է՝

- սահմանազատել և ժամանակավոր ցանկապատել շինարարական հրապարակը, անցկացնել լուսավորություն և տեղադրել հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ,

- շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ /ասֆալտապատ ճանապարհին միացման հատվածում/,

- բետոնի տեղափոխումն իրականացնել ՇՄԱԳ հաշվետվությունում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:

3. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, մասնագիտական ծառայությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով: Բացառել տարածքում թափոնների բաց այրումը:

4. Շահագործման ժամկետի /25 տարի/ ավարտից հետո, ժամկետանց կամ վնասված արևային ֆոտովոլտային մոդուլները /ընդհանուր՝ 9360 հատ/, որպես վտանգավոր թափոնատեսակ /պարունակում է կապար, քրոմ, կադմիում, սիցիլիում և այլ նյութեր/ անհրաժեշտ է՝ պահեստավորումը, տեղափոխումը, վերամշակումը, վնասագործումը իրականացնել ընկերության միջոցներով, Ազատեկի համայնքապետարանի հետ համաձայնեցված և վերահսկողությամբ:

5. Նախագծի վերջնական տարբերակում և շինարարական աշխատանքների ընթացքում հաշվի առնել «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից 31.10.2019թ. տրված N ՏՊ-350-110/1011-Հ տեխնիկական պայմանի պահանջները:

6. ՇՄԱԳ հաշվետվությանը կից հավելվածով ներկայացված է էլեկտրահաղորդման գծի 30 հենասյան կոորդինատները, որոնք ըստ կադաստրի կոմիտեի կողմից տրված կարծիքի՝ էլեկտրոնային կադաստրային քարտեզում տեղադրելիս դրա ուղեգիծը անցնում է Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Ազատեկ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային, իրավաբանական և ֆիզիկական անձանց սեփականություն հանդիսացող մի շարք հողամասերով:

Անհրաժեշտ է նախքան գործունեության սկսելն՝ օրենքով սահմանված կարգով ձեռք բերել հողօգտագործման համար համապատասխան համաձայնեցումները և թույլտվությունները՝ համայնքից և սեփականատերերից:

7. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:



ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Էդմ Սոլար» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Ազատեկ գյուղի տարածքում նախատեսվող արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝  Հ. Մեսրոպյան

